

Անահիտ Գ. Նահապետյան (Գլուսնի)
Բանաս. գիյր. քեկնածու

**ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ
ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՉ**

Նահատակ գրողի և մտավորականի հիշատակին*

Մուտք



Արտաշես Հարությունյանը (1873-1915) 19-րդ դարավերջի և 20-րդ դարի սկզբի արևմտահայ գրականության ականավոր դեմքերից է, որոնց գրական-հասարակական գործունեությունը համընկավ թուրքական հայաջինջ քաղաքականության տարիներին: Երբ հասարակական-քաղաքական կյանքի տարուբերումների այս շրջանում արևմտահայ մշակույթի կարող ուժերը մեծ մասամբ տարագրության մեջ էին, արևմտահայ մշակութային մտքի վրա իր սքափ կանխատեսումներով ու անաչառ գրախոսություններով իշխում էր Ա. Հարությունյանը, որն օրվա գրական հարցերին տալիս էր ճշմարիտ գնահատականներ:

Նա հեռու մնաց Պոլսի եռուն ու բազմաբովանդակ կյանքից, գրկվեց ճամփորդելու հնարավորությունից. նրան արգելել էին անգամ դուրս գալ հայրենի Մալկարա

Գ (Գ) քաղաք, թիվ 2 (38) ասպիե-հունիս, 2012
ՎԵՄ համահայկական հանդես

*Յողվածն ընդունվել է տպագրության 06.06.2012:

գյուղաքաղաքի սահմաններից: Սակայն իր բացառիկ աշխատասիրության, կանոնավոր ինքնուսուցման շնորհիվ ձեռք բերեց խոր իմացականություն, համաշխարհային մշակույթի ճանաչողություն:

Ապագա գրողն առաջին անգամ թղթակցել է Նշան Պապիկյանի «Ծաղիկ Մանկանց»-ին (1889), իսկ 1892-ից սկսած՝ **Կարո, Մակարացի Կարո, Շահեն Կարո, Պան, Ուրվական** գրական ծածկանուններով աշխատակցել է ժամանակի բազմաթիվ մամուլին: Գրախոսել է այդ տարիների արևմտահայ գրեթե բոլոր գրական հրատարակությունները և ընդամենը երկու տասնամյակում ստեղծել հարուստ ժառանգություն՝ բանաստեղծություններ, արձակ գործեր, հոդվածներ:

Նրանց մեջ մեզ է ներկայանում «վաղուան գրականութեան» մտահոգություններով ապրող գրողը:

Գրաբնության սահմանափակումների պայմաններում Ա. Հարությունյանին հաջողվել է հրատարակել բանաստեղծական երեք գրքույկ՝ թվով 152 քերթված: Դրանցից 117-ը գրվել է 1895-1907 թվականներին: Առաջին ժողովածուն լույս է տեսել 1902-ին՝ «Լքված քնար» խորագրով, իսկ 1906-ին հրատարակվել են «Երկունք», ապա 1912-ին՝ «Նոր քնար» ժողովածուները¹:

Գրողի նահատակությունից հետո Փարիզում 1937-ին «Նահատակ գրագետներու բարեկամներ» մատենաշարով (թիվ 10) լույս է տեսնում նրա «Արձակ էջեր և քերթվածներ» փոքրիկ ժողովածուն:

Ա. Հարությունյանի մասին մամուլում լույս են տեսել հոդվածներ, գրախոսականներ, հուշեր, գրական վաստակի, լեզվի ու ոճի գնահատություններ, որոնց անդրադարձել ենք մատենագիտական ցանկով, այդ թվում՝ ընդգրկել ենք վաթսուն անուն պարբերականներում սփռված նրա գործերը (շուրջ 460 անուն):

Արևմտահայ գրականության պատմագիր Մ. Թեղեղյանը «Դար մը գրականություն» ծավալուն հատորում Ա. Հարությունյանին գնահատել է որպես 1890-1915 թթ. «...մեր աշխարհաբարի ամենէն վարպետ գրիչներէն՝ ...գեղարուեստագէտի ցայտուն արժանիքներով»²:

Ա. Հարությունյանի գեղարվեստական վաստակն արժևորել են **Վ. Թորոլենցը, Լ. Բաշայանը, Թլկատինցին, Հ. Օշականը, Ա. Չոպանյանը, Մ. ճանաչանը, Հ. Մնձուրին, Գ. Վարուժանը, Սիամանթոն, Ռեմի դը Գուրմոնը, Էմիլ Վերհարնը, Ժան Մորեսսը** և ուրիշներ: Ա. Հարությունյանին են ձոնված ու ընծայագրված Ռ. Չարդարյանի «Աստվածները», Մ. Մեծարենցի «Բաղձանք», Վահան Յարճանյանի «Արտաշես Հարությունյան» բանաստեղծությունները³, Օննիկ Չիֆթե-Սարաֆի «Կենսաթոշակը» նորավեպի թարգմանությունը⁴, «Պոլսական տեսարաններ-երջանկության սեմ» պատմվածքը⁵, Հ. Օշականի «Պաղտո» վիպակը⁶, Թլկատինցու «Փշուր մը հինեն» պատմվածքը⁷ և այլն:

Խորհրդահայ իրականության մեջ Ա. Հարությունյանի ժառանգությանը, մաս-

1 Ա. Հարությունյանի բանաստեղծությունները հրատարակվել են նաև արտասահմանյան մամուլի էջերում, հայ և օտար լեզուներով լույս տեսած գրական ժողովածուներում ու պարբերականներում:

2 Մ. Թեղեղյան, «Դար մը գրականութիւն», հ. Ա., Պոսթըն, 1977, էջ 534:

3 Տե՛ս «Արեւելեան մամուլ», Ջմիւռնիա, 1902, N 244, էջ 1004-1005: Տե՛ս նաև՝ Մ. Մեծարենց, Երկերի ժողովածու, 1981, էջ 117-118: Տե՛ս նաև՝ «Շանթ», Կ. Պոլիս, 1919, N 38, էջ 437:

4 Այս թարգմանությունը, ինչպես նաև Ա. Հարությունյանի եղբոր՝ Վահան Հարությունյանի «Ստեփան աղբարը», «Ծերուկի մը խղճահարությունը» պատմվածքները Ֆրանսիայում արժանացել են մրցանակի: Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1902, N 10, էջ 152:

5 Տե՛ս «Արեւելեան մամուլ», 1909, N 28, էջ 649:

6 «Ազատամարտ» շաբաթաթերթ, հավելված, Կ. Պոլիս, 1911, N 27, էջ 443:

7 «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, N 11, 12, 13, էջ 453:

նավորապես քննադատական վաստակին, սկսեցին ուշադրություն դարձնել «Գիշերվան ճամփորդը» գրքի հրատարակումից (1968) հետո: Կազմող Օնիկ Փանիկյանը, ի մի բերելով գրողի բազմավաստակ ժառանգության զգալի մասը, առաջինը մոռացությունից հանեց ու ընթերցողին ներկայացրեց տաղանդավոր գրողին ու քննադատին: Մա գրողի երկերի առաջին աչքի ընկնող հրատարակությունն էր, ուր գետնեղված էին քերթվածներ, արձակ էջեր ու հողվածներ:

ՕՄԻ ԴԳԻՄՉ

1. Մանկությունն ու պատանեկությունը

«Ծնած եմ 1873թ. Հոկտեմբերի 3-ին Մալկարա,- մենաոր, աղքատ ու մեռած՝ արեւելեան գիւղաքաղաք մը, 6000 բնակչով, Էտիրնէի վիլայէթին մէջ, Ռողոսթոյէն դէպի ներս 9 ժամ հեռաւորութեամբ, բլուրի մը կողի վրայ, ծառաստաններով ողողուն»⁸, - կարդում ենք Ա. Հարությունյանի ինքնակենսագրության մէջ⁹:

Այդ հինավուրց գյուղաքաղաքի բնակչությունը բաղկացած էր հույներից, թուրքերից և հայերից: Հայերն այստեղ գաղթել ու հաստատվել էին 1606-1607 թվականներին՝ թողնելով իրենց հայրենիքը (Ակն, Կամախ, Երիզա, Պոլիս, Երզնկայի շրջանները): Նրանք եկել ու բնակեցրել էին հեռավոր ու օտար վայրը՝ կյանքի ապահովության հույսերով: Փոքրիկ գյուղաքաղաքի արևելյան կողմում էր գտնվում հայկական թաղամասը:

Գրողը մեծացել է պապենական հարուստ ավանդույթներով շնչող ուսումնասեր հարկի տակ: «Ահաւասիկ մեր ընտանիքը,- գրում է Ա. Հարությունյանը,- կը բաղկանայ հինգ հոգիէ. հայրս, մայրս, քոյրս, եղբայրս եւ ես: Մայրս այբը չի ճանչնար, բայց վերջին աստիճանի փափկազգաց եւ յուզուելու մշտապատրաստ կիմ մըն էր: Անդրանիկն ես եմ, իսկ Վերգինէն կրտսերն է... Մեր առտնին կենցաղը չափազանց միօրինակ է եւ բոլորովին նահապետական... Ամէնքս ալ աւելի կամ նուազ առանձնասէր ու լռասէր մարդիկ ենք»¹⁰: Ընտանեկան խաղաղ ու համերաշխ նիստուկացի մասին են վկայում նաև Ա. Հարությունյանի բանաստեղծական հիշատակները, ինչպես նաև Հ. Օշականի բնութագրումները¹¹: Այս միջավայրում է մեծանում վառ երևակայության ու դյուրագգաց հուզաշխարհի տեր երեխան, որին պապի անունով կոչել էին Պողոս: Յոթ տարեկան հասակից նա հաճախում է տեղի Մամիկոնյան վարժարանը, որտեղ սովորություն կար սաներին վերանվանելու հայ պատմական անուններով: Այստեղ էլ ստանում է Արտաշես անունը:

Ա. Հարությունյանը «Մեր նախակրթությունը» հողվածում ցավով էր հայտնում, թե «թաղային պաշտօնեաներու քմահաճոյքը...», «գաւառներուն մէջ կուսակցական երկպառակութիւնները ինչպէս կը վնասեն վարժարաններուն»¹²:

Գ (Ժ) ԳՐԱԳԻ, ՔԻՉ 2 (38) ԿԱՐԻԷ-ԽՈՒՆԻՍ, 2012

ՎԵՄ ԽԱՆԱԽԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՆ

8 Թեոփիկ, «Ամենուն տարեցոյցը», Կ. Պոլիս, 1912, էջ 396:

9 Եղիշե Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում պահպանվել է Ազգային պատրիարքարանի կողմից Արտաշես Հարությունյանին տրված ուսուցչական վկայականը, որի մեջ գրողի ծննդյան թվականը նշվում է 1874 թ.: Տես Ա. Հարությունյանի արխիվ, գործ N 49: Նրա երկերի փարիզյան հրատարակության առաջաբանին հաջորդում է գրողի կենսագրությունը, որի մեջ ծննդյան թվի վերջին ճիշդ չկա. «...Ծնած է Մալկարա 1/15 հոկտ. 187...-ին»: Տես Արտաշես Հարությունյան, Արձակ էջեր և քերթվածներ, Փարիզ, 1937, էջ 9: Այս գրքի համար կենսագրական նյութերը ներկայացրել է գրողի եղբայրը՝ դաշնակցական Վահան Հարությունյանը:

10 «Հայրենիք», թերթ, Պոսթըն, 1928, էջ 4948:

11 Հ. Օշականը շնորհակալական զգացումով, սեղմ ու բնութագրիչ է ներկայացնում «Հայ ամենամաքուր աւանդութիւններով տունը», որի հյուրընկալությունը վայելել է 1911-ից մոր մահից հետո: Տես «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, 15 Յունիսի:

12 «Արեւելեան մամուլ», 1904, N 13, էջ 326:

Անդրադառնալով սերունդների մտավոր ու բարոյական դաստիարակության հարցերին՝ նա նշանակություն էր տալիս «անհատական շահախնդրութեան» զգացումից զերծ, բազմակողմանի պատրաստվածություն ունեցող «ստուգի ու սուցի» դերին:

Նախակրթարանում ուսանելու տարիներին Արտաշեսը սկսել էր իր բանաստեղծական փորձերը: «Յուզումի ու հիացումի ընդունակ»¹³ պատանու հոգու վրա ազդեցություն էին թողնում Դուրյանի, Պեշիկթաշյանի, Ֆելեկյանի, Պերպերյանի բանաստեղծությունները, որոնք կարդում էր, ինչպես ինքն է վկայում՝ «առանց որոշ բան մը հասկնալու, բայց հառաչանքով»¹⁴: Արևմտահայ հոգևոր մշակույթի մեծերն իրենց երկերով, քերթվածներով նրա համար դարձել էին «խրովի կիսաստուածներ»:

Ա. Հարությունյանը առաջին բանաստեղծությունը՝ «Կեռասին», որը չի պահպանվել, գրել է 13 տարեկան հասակում. «Հօրս ծունկերուն վրայ գրեցի իմ առաջին ոտանատրս»¹⁵, - հիշում է նա: Նրա մեծ ուսուցիչը հայրենի բնությունն էր, որը հարստացնում էր տպավորվող պատանու ներաշխարհը: Մալկարայի՝ «ցորենի կանաչ արտերուն դեղաբոյս ու հիւանդոտ զմրուխտը», «ճերմակ հագած հարսերու» մնամվող զարմանային այգիները դառնում են «կեանքին միօրինակ մեղամաղձութիւնը փոխարինող արուեստագիտական հաճոյքի վայելքներն մեկն»¹⁶:

Վարժարանից աննշան զարգացումով հեռացած Հարությունյանը «...զարմանալի յեղաշրջում մը կ'ունենար, ցեղային ժառանգական յատկութիւններն ու կարողութիւնները կարծես հրաշքով լոյս աշխարհ կու գային հետզհետէ... բանաստեղծ, գրագէտ եւ քննադատ Արտաշէսը կազմելու համար»¹⁷, - պատմում է գրողի քեռորդի Մ. Ադասյանը:

Հազիվ տասնվեց տարեկան պատանու գրական-թարգմանչական երախայրիքը «Պատահար մը մեծ ճամբուն վրայ» պատմվածքն էր, որը հրատարակվում է «Ծաղիկ մանկանց»-ում¹⁸: Թարգմանությունների հետ մամուլում սկսեցին երևալ նաև չափածո ինքնուրույն գործեր¹⁹: Գրաբար կամ կիսագրաբար գրված այդ գրչափորձերին հաջորդում են արձակ էջեր («Առ վշտակիր Եղիա Տեմիրճի-պաշեան-հսկման ժամեր»)²⁰:

Ա. Հարությունյանը սկսում է աշխատակցել արևմտահայ գրական պարբերականներին: Նրա գրական հայացքների ու նախասիրությունների աղերսները քննելիս պարզ է դառնում, որ հոգևոր մշակույթի մեծերը ազդեցության աղբյուր են եղել իր համար՝ պատմագրության հսկաներից մինչև Գամառ-Քաթիպա, Նալբանդյան, Բաֆֆի, Հաֆեզ և Խայամ²¹: Թարգմանություններ է կատարել նաև Լև Տոլստոյի և Մ. Գոբկու ստեղծագործություններից²²:

13 «Շանթ», Կ.Պոլիս, Ա տարի, 1912, N 14, էջ 217:

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում:

16 Գիշերվան ճամփորդը, էջ 91:

17 «Նոր օր», Աթենք, 1930, 13 Ապրիլի:

18 «Ծաղիկ մանկանց», Կ.Պոլիս, 1889, N 3, էջ 42-43:

19 Հարությունյանի առաջին բանաստեղծությունը՝ Կարո ծածկանունով, լոյս է տեսել 1892 թվականին, Ա. Արփիարյանի «Հայրենիք» օրաթերթում: (Տե՛ս N 271, «Աշնանային արշալոյս» բանաստեղծությունը): Գրական ծածկանվան կնքահայրը Արփիարյանն էր:

20 Տե՛ս «Ծաղիկ մանկանց», 1890, N 21, էջ 326-329:

21 Գրականության ու արվեստի թանգարանում պահպանվում են Ա. Հարությունյանի ձեռքով արտագրված Օմար խայամի քառյակները (թարգմանիչ՝ **Գ. Փառնակ**): Թարգմանությունները տպագրվել են Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսում: Տե՛ս ԳԱԹ, Ա. Հարությունյանի արխիվ, գործ N 26:

22 Ա. Հարությունյանը իր ժամանակակիցներին ծանոթացնում է Գոբկու գործունեությանը: Նրա թարգմանությամբ Պոլսում լոյս է տեսնում ռուս գրողի «Իմ ընկերը» պատմվածքը: Տե՛ս «Չայն հայրենեաց», 1909, N 22-30, իսկ 1920-ին՝ առանձին գրքուկով:

Նա քաջ ծանոթ էր համաշխարհային դասականներին՝ Ժան Մորեսա, Ժյուլ Ռընար, Մորիս Մետերլինկ, Է. Վերհարն, Շ. Բրոնտե, Ու. Ուիլսոն, Օ. Ուայլդ, Օ. դը Բալզակ, Վ. Շեքսպիր և շատ ուրիշներ: Այդ մասին եղբայրը՝ Վահան Հարությունյանը, գրում է. «Օտար բանաստեղծներեն կը սիրեր Պոլուեռը՝ որմէ թարգմանութիւններ հրատարակած է: ...Նաեւ Վեռլէնը, գոր հիացիկ հափշտակութեամբ կը կարդար եւ կը բացատրէր, Մալլարմէն՝ հակառակ անոր խրթնութեան...: Արձակագիրներէն... պաշտամունք մը ունէր Անաթոլ Ֆրանսի վրայ՝ որուն փիլիսոփայութեանը կը հիանար եւ որուն անխոցելի հեզնական ժպիտը՝ իր նկարագրին շատ յարմար՝ դիրաւ կարողացած էր իւրացնել: Վերջին տարիներուն... ըմբոշխնուով կը կարդար նաեւ Ժյուլ Ռընարը»²³:

Նյութական ապահովվածությունը Արտաշես Հարությունյանին ազատում էր առօրյա հոգսերից: Աշխատելով հոր խանութում՝ նա պարապ «պահերը ապարդիւն չէր թողուր...: Կը տեսնէինք զինքը զլիսահակ գրելով, զբաղած կամ հեղինակութիւն մը ուսումնասիրելու վրայ, շուրջը՝ օրաթերթեր, հանդէս, գիրք, ամէն լեզուով եւ ամէն նիւթերով, դես ու դեն»²⁴:

Սիրում էր նկարել և ազատ ժամերին բանաստեղծական տետրերի վերջին էջերը լցնում էր գծանկարներով²⁵: Օժտված էր նաև ճարտասանական ձիրքով..., որը վկայում է Հ. Օշականը. «...Գեղին դպրոցը գոցելով ես... գրեթէ կը վազէի... խանութը: ...Ան կը խօսէր: Վարժապետ մըն ալ ան, բայց մեծերուն վարժապետը, ինչպէս պիտի ըսէին իր գեղին ծերերը: Ու ինձի կը մնար բերանս բաց կախուել անոր բառերուն թելէն, որ գրուած արձակի մը ուժը ունէր շատ անգամ»²⁶:

«Վարժարանին մէջ ֆրանսերէն լեզուի հագիւ թէ տառերը ուսած»²⁷ Ա.Հարությունյանը համառ աշխատասիրությամբ կատարելագործում էր իր իմացած ֆրանսերէնը: 1895-1896 թթ., ավելի ուշ նաև՝ Ադանայի ջարդերի օրերին, «Շահեն Կարո» գրական ծածկանունով Փարիզի պարբերականներում («Լը Մագազեն Էնթերնասիոնալ», «Լը Անքլո», «Յունիոն դը Փարի») լույս տեսնող թղթակցությունները գաղափարապես այնքան հագեցած ու կատարյալ էին, որ ֆրանսիացի մտավորականներից մեկը փարիզաբնակ մի հայի նկատել է տվել. «Կը թուի թէ Պոլիս Չեր քաղաքական մայրաքաղաքն է, իսկ Մալկարան՝ մտատրական ու համալսարանական կենտրոն մը, որ իր մէջ կը համրէ նման կարողություններ»²⁸:

Արևմտահայ մամուլում լույս էին տեսնում Արտաշես Հարությունյանի բազմաբնույթ հոդվածները: Հասարակական-մշակութային հարցեր քննելիս, գրական-տեսական խնդիրներ պարզաբանելիս կամ որևէ գրողի վաստակն արժևորելիս գրող-քննադատը ներկայացնում էր նաև հայ մշակութային կյանքի տեղաշարժերը:

Տեղաշարժեր ապրում էր նաև ինքը. անհաջող նշանադրությունից հետո 1913-ի կեսերին, երբ արդեն թուրքերը վերագրավել էին Մալկարան, Հարությունյանների ընտանիքին հաջողվում է տեղափոխվել Պոլիս և բնակություն հաստատել Սկյուտարի արվարձանում: Գրողին հրավիրում են դեկավարելու «Բիզանդիոն»-ի և ապա՝ «Շանթ»-ի քննադատական բաժինները: Այնուհետև, Գրիգոր Զոհրապի

23 «Անահիտ», Փարիզ, 1939, N 4-5, էջ 17:
 24 «Նոր օր», Աթենք, 1930, 13 Ապրիլի:
 25 Տե՛ս ԳԼԹ, Ա. Հարությունյանի արխիվ, գործ N 66-68:
 26 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, 15 Յունիսի:
 27 «Անահիտ», 1939, N 4-5, էջ 4:
 28 «Հայրենիք», թերթ, Պոսթըն, 1928, N 4946:

շնորհիվ, Արտաշես Հարությունյանն աշխատանքի է անցնում «Յունիոն դը Փարի» ապահովագրական ընկերությունում: Ֆրանսերենի հմուտ իմացությունը նրան հնարավորություն է տալիս աշխատելու որպես քննիչ-պաշտոնյա: Սակայն ամիսներ անց վրա է հասնում աշխարհավեր պատերազմը: Ընկերությունը կրճատում է իր պաշտոնյաների թիվը՝ վիճակ նետելու սկզբունքով: Ա. Հարությունյանը հեռանում է աշխատանքից և անցնում Ս. Խաչ, Արամյան և կաթոլիկ հայերի վարժարաններ՝ պաշտոնավարելով իբրև լեզվի ուսուցիչ:

2. Արտաշես Հարությունյանի գրական գործունեության շուրջ

1890-ական թթ. կեսերից ծայր է առնում արևմտահայ մշակութային կյանքի հուսահատության ու լքման առաջին շրջանը: Կենսունակ ուժերը (Ա. Արփիարյան, Ե. Օտյան, Արշ. Չոպանյան, Ռ. Չարդարյան, Վ. Թեքեյան, Երուխան, Լ. Բաշալյան, Ս. Պարթևյան, Միամանթո և ուրիշներ) ստիպված հեռանում էին Եվրոպա: Դրա շնորհիվ արտասահմանում զարթոնք ապրեց հայ մամուլը, նոր շունչ հաղորդվեց տարասփյուռ հայ գրականությանը: Բուն Պոլսում, սակայն, գրամշակութային կյանքը կանգ չառավ, թեև կար նկատելի կտրվածություն արտակենտրոն զարգացումներից: Այդ մասին Մկրտիչ Պարսամյանը գրում է. «...անոնք որ Թուրքիա կը բնակէին, ...անհաղորդ էին ինչ որ կ'անցնէր ու կը դառնար դուրսը, արտասահմանի մէջ: Միայն աղօտ լոյսեր, մարմրուն ձայներուն արծագանգը կը հասնէին Պոլիս, գաւառը՝ երբեք, ու ան ալ ինչ դժուարութեամբ ու ինչ մեծ վտանգներով ...Արտաշէս Յարութիւնեան, մնալով մէկտեղ իր ծննդավայրը, Մալկարայի մէջ, գտաւ միջոցներ, թերեւս մեծ զոհողութիւններով ու վտանգներով հետեւեցաւ ոչ միայն միջազգային գրական-գեղարուեստական շարժումներուն, այլ նաեւ հայ գրական այն շարժումին, որ Թուրքիայէն դուրս խմորուել ու թրծուել սկսեր էր»²⁹: Իր անշարժ կեցությունը ցավով էր ընդգծում Հարությունյանը. «Միշտ մնացեր եմ Մալկարա, ուրկէ գրեթէ դուրս եկած չեմ ամբողջ բռնապետութեան շրջանին: Չեմ ճամբորդած»³⁰: 1910 թ. սրտի ցավով հայտնում էր, թե «...տասը տարիներէ ի վեր չեմ կրցած թողուլ գիւղը»³¹, իսկ «...կեանքը, որուն մէջ կ'ապրիմք, իր առօրէն մանրամասնութեանց մտահոգութենէն անմասն չի թողուր զմեզ: Այդ ճշմարտութիւնը, մանաւանդ հայուն համար, աւելի ուժեղ նկարագիր մը ունի»³²:

1899 թվականին «Բյուրակնի» էջերում հրատարակվեցին Ա. Հարությունյանի «Վաղվան գրականությունը» շարքի Ա., Բ., Գ. հոդվածները³³, որոնցում, ելնելով ազգային-մշակութային կազմակերպման հարցերից, գրողն առաջադրում էր հետամուտ լինել ու պաշտպանել ժողովրդական գրականության դիմագիծը, այսինքն՝ ազգային դրոշմը: Արևմտահայության շրջանում կարևոր նշանակություն էր ձեռքբերում գոյատևման կենսափիլիսոփայությունը, ըստ որի՝ մշակույթը ստանում էր ազգային պահպանության դերակատարությունը:

1900-1901 թվականներին գրողի նախածեռնությամբ հենց «Մասիս» շաբաթաթերթի էջերում ծավալվեց գրական բանավեճ, որի նյութը դարձյալ «վաղուան գրականությունն» էր: Ա. Հարությունյանը բարձրացնում էր նորատիպ հիմնահար-

29 Նույնը, 1928, N 4944:

30 «Ամենուն տարեցոյցը», Կ.Պոլիս, 1912, էջ 396:

31 «Հայրենիք» թերթ, Պոսթըն, 1928, N 4944:

32 «Արևմտահայ գրողների նամականի», Եր., 1972, էջ 204:

33 Տե՛ս «Բիւրակն», Կ.Պոլիս, 1899, N 9-10, էջ 120-131, N 12, էջ 177-179, N 14, էջ 209-211:

ցեր. ա) ճշմարիտ հայ գրականությունը, բ) Պոլսի դերը նման գրականության ձևավորման ճանապարհին, գ) «ձգտումի» դերը, արևմտահայ գրական բարեշրջումը և «Վաղվան գրականությունը», դ) գավառի գրականության նշանակությունը այդ «բարեշրջության» մեջ³⁴:

Գավառի գրականությունը սնվում էր ութսունականների իրապաշտ սերնդի առաջադրություններից, կենսաթրթիռ էր պահում նրա հասարակական-գեղագիտական ընկալումները, արտաքին չեզոք կոչի տակ արժարժում արևմտահայությանը հուզող խնդիրներ: Ավելի ուշ, մեհենական շրջանում «Վաղվան գրականություն» եզրը վերածեց «Հայաստանեայց գրականութեան»³⁵, ընդլայնվեցին նաև նոր ընդգրկումով հայեցակետեր: «Վաղվան գրականության» կենսական արտացոլման խնդիրները Ա. Հարությունյանը համարում էր գրականության գնահատման «մշտագո չափանիշեր», որոնք, ըստ նրա, բավարար չէին արևմտահայ գրականության մեջ: Բանավեճին ակնբախ էր դառնում գրականության նորագույն պահանջը, որի դատը պաշտպանեցին ժամանակի առաջադեմ շատ դեմքեր (Ա. Չոպանյան, Էդ. Գոլանճյան, Միք. Կյուրճյան, Մ. Շամտանճյան և ուրիշներ)³⁶:

1890-ական և 1900-ական թթ. Ա. Հարությունյանի՝ գրադատական նախասիրությունների ձևավորման մեջ խոշոր դեր խաղացին նաև ֆրանսիական մտածողներ Ժյուլ Լեմետրը, Ռեմի դը Գուրմոնը, Մարսել Շվոբը, ինչն արտահայտվեց մեկը մյուսի ետևից մամուլում լույս տեսած նրա քննադատական հոդվածներում:

Գրողի բանաստեղծական փորձերն ամփոփվել են «Լքուած քնար» ժողովածուում, որը լույս տեսավ 1902 թվականին Կ. Պոլսում: Հիսունչորս քերթվածներից բաղկացած այդ գողտրիկ գիրքը նա նվիրեց նշանավոր Թլկատիցուն: Ժամանակի քննադատությունը արձագանքեց՝ գնահատելով հոգեկան անձնավորումի և բնապաշտության ռոմանտիկական գրական շաղախն իբրև գլխավոր բովանդակություն: Ահա թե ինչ էր գրում Ե. Տեմիրճիպաշյանը. «Կարոյին (Արտաշես Հարությունյանի-Ա.Ն.) յաջողութիւնը բոլորովին բացառիկ հանգամանք մը ունեցաւ... երբ... այն գուտ աշխարհաբար բանաստեղծութեանց շարքն հրատարակուեցաւ, ուր բնութիւնն ու հոգին իրենց բիւրեղային կամ բոցային արտայայտութիւններով ի յայտ կու գային այնքան անակնկալ կերպով»³⁷:

«Լքուած քնար»-ը անաղմուկ շեփորեց առողջ զգացողությամբ շնչող, բնության ու ժողովրդական տարերքից սնվող մտիվներ: Ասպարեզ իջան բնաշխարհի մշակված, հոգեհարազատ պատկերներ: Շնչում ու կենդանություն է ստանում Մակարան՝ իր նիստուկացով, առօրյա ապրելակերպով: Պատկերների ենթախորքերում իմաստավորվում են անհատի հոգեկան ալեբախումները:

1906-ին Կ. Պոլսի «Նշան Պապիկյան» մատենադարանը հրատարակում է Ա. Հարությունյանի 34 քերթվածներից բաղկացած նոր՝ «Երկունք» ժողովածուն: Այն բացվում է հեղինակի՝ «Ընթերցողին» ուղղված խոսքով. «Բանաստեղծութեանց այս պզտիկ հատորը մասնաւոր ծրագրի մը համաձայն պատրաստուած երկասիրութիւն մը չէ, - գրում էր Ա. Հարությունյանը: - Ասիկա փունջ մըն է, կազմուած

34 Տե՛ս Գիշերվան ճամփորդը, էջ 321-322:

35 Տե՛ս «Մեհեան», Կ.Պոլիս, 1914, N 3, էջ 46:

36 «Վաղվան գրականության» մասին Ա.Հարությունյանի գեղագիտական առաջադրությունը մեզանում սկզբունքային մեկնության են ենթարկել Ս. Սարինյանը («Գեղարվեստական գրականության պատմականությունը», Եր., 1979, էջ 300-361), Հակոբ Պետրոսյանը («Գեղամ Տեր-Կարապետյան», Եր., 1983, էջ 93-164), Լաուրա Մուրադյանը, Լ. Կարապետյանը և ուրիշներ:

37 «Մասիս», Կ.Պոլիս, 1899, N 8-9, էջ 248-249:

մեծագոյն մասով այն քերթուածներու, որ «Լքուած քնար»-ին հրատարակութեանն առաջ ու ետքը լոյս տեսած են զանազան պարբերականներու մէջ: Ընդհանրապէս դեռ երէկ միայն գրուած բանաստեղծութիւններ չեն անոնք: Անոնց մէջ կան որ տասնեակ մը տարիէ ի վեր կեանք ունին արդէն»³⁸: Իրոք, Ա. Հարությունյանի արխիվում պահպանված դրանց տարբերակները³⁹ պատկերացում են տալիս գրողի խստապահանջության մասին: Նկատենք, որ այդ ստեղծագործություններից շուրջ երկուսուկես տասնյակը գրվել են 1895-1899 թվականներին:

Երկրորդ ժողովածուի դերի մասին հեղինակը գրել է, թե այն «...տրամաբանական կապ մըն է «Լքուած քնար»-ին ու «Նոր քնար»-ին միջեւ: Հոգիիս շրջանառութիւններուն հանգրուաններէն մին կը յատկանշէ անիկա: Բանաստեղծութեանց հատորի մը հրատարակումը՝ հասարակ ձեով ըմբռնած օգտակարութեան մը տխուր ու նուաստացուցիչ կոչումէն հեռու է: Միայն թէ, մարդ իր հոգիին հաղորդականութիւնը կը փորձէ»⁴⁰: Հիրավի, «Երկունք»-ի էջերը դառնում են գրողի հոգեկան գողտրիկ ապրումների գեղարվեստական վավերագրեր, ինքնատիպ ոճով ներկայացնում են քնարական հերոսի տրամադրությունները, սիրո՞ իրական հիմքով հույզն ու թրթիռը: Ժամանակակիցը վկայում է. «Իր առաջին երկու հատորներուն մէջ բնութենապաշտ յուզումը խառնուած է սիրուած էակի մը առթած գորովալի զգացման՝ այնպիսի վերացական ու մաքուր արտայայտութեամբ մը, որ իր քննադատները... վճռեցին թէ քնքշօրէն երգուած այդ գորովը ուղղուած էր երեւակայական էակի մը: ...թէեւ բոլորովին կը սխալէին, բայց ինքը բնաւ չհերքեց այդ սխալը: Եւ սակայն այդ էակը գոյութիւն ունեցած է յանձին տիկնանց վարժարանէն վկայուած օրիորդի մը, որ ուսուցչուի էր Մալկարայի աղջկանց վարժարանին մէջ: Այդ մաքուր սիրոյն մասին ան ոչ մէկ բան ըսած է ինձի, բայց այն առեն ես դեռ պատանի, պատահաբար կարդացած եմ իր մէկ նամակը ուղղուած այդ օրիորդին՝ որ կը փոխադարձէր այդ սէրը՝ որ մեր ծնողքին ընդդիմութեամբ խորտակուեցաւ շուտով»⁴¹:

Ա. Հարությունյանի բանաստեղծական երրորդ մատյանը, որի մէջ ներառված էր թվով 64 քերթված, լոյս է տեսնում 1912-ին Ղալաթիայում՝ «Նոր քնար» վերտառությամբ: Գրողի արխիվում պահպանված անտիպ նյութերը վկայում են, որ այս ժողովածուի մէջ տեղ գտած բանաստեղծությունների զգալի մասը գրվել է վաղ շրջանում: Բավական է հիշատակել երկու փաստ. «Նոր քնար»-ում զետեղված «Ապրելու գինովություն» քերթվածը գրվել է 1896-ի դեկտեմբերի 18-ին: Բանաստեղծն այն վերամշակել է 1904 թվականի մայիսի 18-ին⁴², սակայն ստեղծագործությունը տեղ չի գտել ո՛չ 1902 և ո՛չ էլ 1906 թվականներին լոյս տեսած ժողովածուներում: Նույնը կարելի է ասել նաև «Աշնան ծաղիկներ» խորագիրը կրող քերթվածի և այլ բանաստեղծությունների մասին: Վերոհիշյալ գործը 1904 թվականին լոյս է տեսել «Արևելյան մամուլ»-ի մէջ և 8 տարի հետո միայն, հղկված ու վերամշակված, զետեղվել է «Նոր քնարում»:

«Անըջանք» գրքի հեղինակ Մերուժան Պարսամյանին ուղղված՝ հեղինակի նամակներից պարզ երևում է, որ 1909 թվականին բանաստեղծը դեռևս

38 Արտաշէս Յարութիւնեան, Երկունք, Կ. Պոլիս, 1906, էջ 3:

39 Տե՛ս ԳԱԹ, Ա. Հարությունյանի արխիվ, գործ N 1, 2, 3, 4, 5, 6, 7:

40 Արտաշէս Յարութիւնեան, Նոր քնար, Կ. Պոլիս, 1912, էջ 3:

41 «Անահիտ», Փարիզ, 1939, N 4-5, էջ 5:

42 Տե՛ս ԳԱԹ, Ա. Հարությունյանի արխիվ, գործ N 2, էջ 9:

տատանվում էր՝ ժողովածուն հանձնե՞լ հրատարակության⁴³: Բժախնդրությունն էր պատճառը, որ Հարությունյանի շատ քերթվածներ մնացել էին չիրապարակված: «Դժուարահաճութիւնը, վարանումները, խստութիւնը իր սեփական արուեստին նկատմամբ զինքը մատնած էին տեսակ մը անլութեան, ուրկէ կը տանջուէր եւ ուրկէ դարմանուելու որեւէ յոյս չունէր», - հետեղեռնյան շրջանի հուշերում պատմում է Ջապել Եսայանը և հավելում՝ «Ինքնաքննադատութիւնը ոչ ոքի մէջ հասած էր այն սուր, գրեթէ խայթող վիճակին, որքան Արտաշէս Յարութիւնեանի մէջ, որուն խիստ քննութեան միակ առարկան ինքն իսկ էր այդ առանձնացեալ եւ միօրինակ կեանքին մէջ, որը վարելու հարկադրուած էր ...այն իմաստուն եւ հանդարտ համակերպութեամբ, որ մեծ եւ ներդաշնակ հոգիներու յատուկ է»⁴⁴:

1911-ի նոյեմբերին Մակարայից Ա. Չոպանյանին ուղղված նամակում Ա. Հարությունյանը գրում էր. «Երկարատեւ վարանումներէ եւ անթիւ retouch-ներէ յետոյ, վերջապէս, ձեռնարկեցի «Նոր քնար»-ին հրատարակութիւնը...»⁴⁵: Մեկ այլ խոստովանություն. «Կարծեմ թէ գրած եմ, որովհետեւ չէի կրնար չգրել: Բայց գրածիս վրայ հաւատք չունիմ»⁴⁶, - կարդում ենք Թեոդիկի «Ամէնուն տարեցոյց»-ում տեղ գտած Հարությունյանի մտքերը:

Ա. Հարությունյանի բանաստեղծական վերջին մատյանը ևս արժանացավ ժամանակի գրաքննադատության գնահատմանը: «Նոր քնար»-ում դրսևորվում էր բանաստեղծի աշխարհայացքի ու մտածողության գեղարվեստական բեկման իրողությունը: Իրականության ու մարդկային հոգեբանության իմացությունը յուրովի իմաստավորվում էր բնության պատկերներում, նորովի էր հնչեցնում նաև արևմտահայի հոգու՝ կարծես ավանդական դարձած ցավերգը, կենսատենչ ակնկալիքներն ու սպասումները, թեև սոցիալական բողոքի ձայնը նրա բանաստեղծական գրքերում չունի նույն կիրքն ու հախտուն թափը: Թերևս սրանով է պայմանավորվում այն հանգամանքը, որ «...ինքնատիպ խոհալից ներշնչմամբն ու նրբահյուս նկարեն ռճով» գրված բանաստեղծական «Նոր քնար» ժողովածուն Մեծարենցի, Վարուժանի և Միամանթոյի ժառանգության կողքին ստացավ իր համեմատաբար մեղմ գնահատականը: Նշվեց, որ «Ասիկա այն գոռ ու դիւահար քնարը չէ, որուն հնչեցուցած... եղանակները... յոգնեցուցին՝ կասկածելի արուեստի մը... ջղագրգռութիւնը տալով...: ...Տարտամ motif-ներու... տաղաչափող մը չէ Մակարայի խոր հողը. իր մօտ, բանաստեղծական մտածումը տիրական ցայտքով մը կը բխի, բեղուն կշռոյթով մը կը յորդի, ու ձեւը սեղմ, զուսպ, ներդաշնակ գաղափարին կը հագցնէ... խորհրդի տեսակ մը հագնեցող յուզումով»⁴⁷:

Կյանքի վերջին տարիներին Ա. Հարությունյանը կարծես խուսափում էր գրելուց և հաճախ էր կրկնում, թե «...գրականություն ընելն ալ ունայն է»։ Իսկ ստեղծագործական ոգեշնչման վերջին աղբյուրը «Մեհեանի» ծնունդն էր և Ջ. Եսայանի հետ Մետերլինկի դրամաների թարգմանական աշխատանքը:

43 Տե՛ս «Կեանք եւ արուեստ» տարեգիրք, Փարիզ, 1931, էջ 8:
 44 «Յանբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 43, էջ 1370:
 45 **Կարօ Գեորգեան**, «Ամէնուն տարեգիրքը», Ջ տարի, Պէյրուս, 1959, էջ 112:
 46 **Թեոդիկ**, «Ամէնուն տարեցոյցը», Կ.Պոլիս, 1912, էջ 396:
 47 «Յոսանք», Գահիրէ, 1912, N 26, էջ 443:

3. Գրականության հոգեբանական ընկալման հիմքերը

1903-ից Ա. Հարությունյանը զբաղվում է նաև հոգեբանության խնդիրներով, մասնավորապես՝ հիպնոսի հետազոտությամբ: Գարասկզբի արևմտահայ միտքը առաջադրում էր անհատի խառնվածքի հոգեբանական քննության գիտական սահմանման խնդիրը: Ա. Հարությունյանն ուսումնասիրում է իր ժամանակի հոգեբաններ Ժորժ Բայոյի, Մյուլֆորտի և Բելլայի գիտական աշխատությունները («Կամքի դաստիարակություն», «Ձեր ուժերը և զանոնք շահագործելու միջոցները»):

1907-ին հրատարակված «Գրալուծություն և դաստիարակություն» հոդվածում Ա. Հարությունյանը նկատում էր. «Գրալուծութիւնը մաթեմաթիքական գիտութեանց ճշգրիտ բացարձակութիւնը չի կրնար ունենալ...: Անհկա գիրը չի լուծեր գրահաշուական տարագի մը համեմատ: Որովհետեւ, անհկա միջոց մը ըլլալով մարդկային հոգիին երեւոյթներուն ուսումնասիրութեան, նոյնքան գիտութեան՝ որքան տաղանդի գործ է...: Գրալուծութիւնը դիմագիտութեան, գանկագիտութեան ու նմանօրինակ գնական գիտութիւններու պէս ...կը զբաղի մարդկային նկարագրին ուսումնասիրութեամբ»⁴⁸:

Ա. Հարությունյանը սահուն անցում է կատարում դեպի երեխաների հոգեաշխարհ: Նա գտնում է, որ երեխայի ձեռագրի ճիշտ քննությունը բացում է հոգեվերլուծության նոր դրակ: Գրավորի միջոցով բացահայտելով մանկան տարբեր հոգեվիճակները՝ հոգեբանը ճիշտ ուղղություն կհաղորդի «ենթակայի» հակումներին, ընդունակություններին ու նախասիրություններին: Ըստ Ա. Հարությունյանի՝ պատմահասարակական նոր պայմանները հիմնավոր փոփոխություններ են առաջադրելու նաև հոգեբանության աշխարհաճանաչ մեթոդների մեջ: Նրա հոգեբանական հմտության ու խորաթափանցության շնորհիվ գրական երկի նպատակը, կերպարները եւ ինքը գրողի համար նոր բնութագրումների դուռ են բացում: Է. Վերհարնը, Սիամանթոն, Ջ. Եսայանը և մյուսները Ա. Հարությունյանի պատկերացումներում «...անսխալ էին ու երբեմն ենթականերուն համար իսկ երեւան կը բերէին անակնկալ յայտնութիւններ իրենց հոգիներուն չյայտնուած ծալքերուն մասին»⁴⁹, գրում է ժամանակի խմբագիրներից Սկրտիչ Պարսամյանը: Ա. Հարությունյանի իմացության շրջանակներն ընդլայնվում են շնորհիվ ձեռագրի վերլուծության տեսաբան-հիմնադիր Գրեբիեռ Ժամենի հետ ունեցած կայուն թղթակցության, ինչը, դժբախտաբար չի պահպանվել⁵⁰:

Ազգային առաջընթացի ու լուսավորության հարցերում մտավորականներից շատերը դեռևս հասու չէին նոր իրողությանը, մինչդեռ Ա. Հարությունյանը կարծում էր, որ. «...հայ ապագայ սերունդը ...բնաւ պէտք չունի կրօնական դաստիարակութեան՝ ջնարակով թրծուելու անհրաժեշտապէս՝ ամուր անօթներ ըլլալու համար: Ըստ իս,- ավելացնում էր նա,- ջնարակը միշտ երկրորդական է: Խնդիրը

48 «Մասիս», 4. Պոլիս, 1907, N 12, էջ 227:

49 «Յայրենիք» թերթ, 1928, N 4945:

50 Ըստ գրողի եղբոր վկայության՝ Ա. Հարությունյանի ձեռագրերի պատկառելի մասը «գզուշավոր» մայրը այրել է: Որոշ ձեռագրեր «...գոր թուրքերը հայ կոշկակարի մը ծախել էին անպէտ կարծուած թուրքերու հետ, կոշկակարը հասկնալով տետրակին կարեւորութիւնը՝ երկիւղածութեամբ պահած էր եւ զայն իրեն յանձնած: Արտաշէսի բազմաթիւ թղթակցութիւններ Ռ. Ջարդարեանի, Թլկատինցիի, Յ. Գազանճեանի եւ պոլսահայ գրեթէ բոլոր գրողներուն հետ կորսուած են դժբախտաբար»: Տես «Յառաջ», Փարիզ, 1937, 14 Ապրիլ: Դժբախտաբար, կորսված են էմիլ Վերհարնի, Ռեմի դը Գուրմոնի, Մորիս Սետերլինկի, Սիամանթոյի և այլոց հետ ունեցած նրա նամակները:

կալին վրայ է: Կարը պէտք է գուտ, մաքուր, ազնիւ ըլլայ: Ապա թէ ոչ, ամէնէն փայլուն ջնարակը արգելք չի կրնար ըլլալ, որ անօրը հնոցին մէջ չճաթի: Կը հաւատամ, թէ կարելի է ձեռի բերել կարը, բայց փոխել անոր հիմնական հանգամանքը, չեմ հաւատար ատոր»⁵¹: Մեզանում ձեռի ու բովանդակության հոգեբանական քննության բարձրագույն օրինակներից մեկն է սա, որը քննվում է գրականության ու պատմագիտության սահմանագծին:

Իրեն գրական հոգեբանական դպրոցի տեսաբան կարգած Ա. Հարությունյանը հետևել է Լոնդոնի «Հոգեբանական ուսումնասիրությունների ընկերության» ծավալած գործունեությանը: Վերջինս հավաքագրել էր Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Ամերիկայի լավագույն փիլիսոփաներին ու հոգեբաններին (Բալֆուր, Ուիլյամ, Քրուքս, Շարլ Ռիչեն...), զբաղվում էր մարդու ներքին կենսադաշտի գործառույթի ստեղծագործական կողմերի քննությամբ և ենթագիտակցական ոլորտի հատկանիշներից՝ երազատեսության հարցերով: Երազի և հոգեֆիզիոլոգիական բնույթը բացահայտող երևույթի՝ կանխագագաման ու հեռագագացության քննությունը նոր հոգեբանության տարրերից էր: Ա.Հարությունյանը հասել է այն եզրահանգման, թե «...բաղդը՝ իբրև կոյր ուժ մը մեր ճակատագիրը վարող, գոյութիւն չունի. թէ մեր վայելած կեանքը՝ մեծագոյն մասամբ՝ ուղղակի մեր անձին բխող, մեր հոգեկան ու իմացական կարողութիւններուն ներքին պայմաններէն առաջ եկող կարգ մը հանգամանքներու արգասիքն է, եւ եթէ ուզենք՝ կարող ենք տէրը ըլլալ մեր ճակատագրին կարելոր աստիճանով մը»⁵²:

Այս հիմնավորումները նա տարածում էր գրականության մեջ՝ նույն հարթության վրա կազմելով Մ. Պրուստի, Ֆ. Դոստոևսկու և Հակոբ Օշականի ստեղծագործության ընդհանրական շերտերը: Իսկ «Անձնական մագնիսականություն» հոդվածում նա պաշտպանում էր այն տեսակետը, թե կամքի դաստիարակության գիտական մեթոդը «...կը յաւակնի լուծել մեծ անհատականութեանց յաջողութեան գաղտնիքը...»⁵³:

Այս ելակետով էլ նա քննում էր թուրք ցեղի մեջ գտնվող բարբարոսների հոգեբանության ստորոգելիները և նրա պատմական անցյալի քննական լուսաբանությամբ բացահայտում «...արինալի յաղթանակներն ու կործանարար այն յառաջխաղացումները, որոնք երբեմն Եւրոպայան սարսափի մատնեցին»⁵⁴:

Այդ սարսափների ու ֆիզիկական խոշտանգումների մեջ, ի դեպ, ընկան ինքն ու հայրը 1915-ին, սակայն հոգեբանական արիության հրաշալի օրինակ տվեցին: Նրանք ոչ միայն լռեցին «վախստական» Հ. Օշականի մասին շարունակական հարցումների դիմաց, այլև իրենց մահը Իզմիթում ընդունեցին հպարտ «ինքնիշխանութեամբ»⁵⁵:

Հոգեբանական կամային հատկանիշները, անկասկած, օգնեցին նրան արժանապատիվ դիմավորել մահը: Ուստի խոր իմաստ կա Հ. Օշականի հետահայաց «սրբացած» գնահատականի մեջ. «Մահուան դէմ՝ ինչպէս ալ գոցես աչքերդ, ով իմ լաւագոյն մարդս, ես համոզուած եմ, արիի զուարթութիւնը բացուեցաւ ոսկիի

51 «Արեւելեան մամուլ», 1906, N 39, էջ 271:

52 Նույնը, N 15, էջ 360-361:

53 Նույն տեղում:

54 «Հայ գրականութիւն», Չմիւռնիա, 1912, N 7, էջ 4:

55 Ականատեսներից Թորգոմ Գալընյանը պատմում է, թե չորս օր է միայն, որ բերել էին Իզմիթի բանտ, և արդեն Օգոստոսի 19-ին գիշերով նրանց տանում են ստույգ մահվան. «Արտաշես ձեռքս սեղմեց, մնաս բարով ըսա... եւ անւերցուց. «Չեմ գիտեր թէ ուր կը տանին զիս, գուցէ մեռնելու կ'երթամ, մնաս բարով» («Ժամանակ», Կ.Պոլիս, 1920, N 3850):

պէս քու մաքուր արիւնիդ միջէն ու այնքան սիրած Մեթերլինկի հոգիէն երիզ մը իջաւ քու վրայ: Ու հակառակ անոր որ ոճիրն էր քեզ զգետնողը, քու պատանքը ժպիտ մը եղաւ, Մեթերլինկի ժպիտը»⁵⁶:

Նույն՝ եվրոպական հոգեբանական խառնվածքի տարբերիչ գծերը Ա. Հարությունյանը դնում էր հավաքական ընկալման խորքում՝ գտնելով, որ մարդու վարքագծի բարոյական նորմերը ավելի շատ պայմանավորվում են սովորության հանգամանքով, իսկ վերջինս՝ անհատական խառնվածքով ու ժառանգականությամբ: Բոլոր դեպքերում խառնվածքի տիպաբանական քննությունն ունի միայն «եղանակավորիչ ազդեցություն»... անգամ ազգային դաստիարակության հավաքական ընկալումներում: Հեղինակն այս հանգամանքով էր պայմանավորում ազգային նկարագրերի ճանաչված, յուրահատուկ տարբերությունները. «Ֆրանսական նկարագիրը ...անկեղծօրէն կրքոտ: Մինչդեռ Անգլիան՝ ...պաղարին, խստօրէն վերապահոտ»⁵⁷: Այն հարցին, թե հայ սերունդը դաստիարակության հարցում դրանցից որի՞ հետևորդը պետք է լինի, հրապարակախոսը պատասխանում էր. «Ոչ մինը, ոչ միւրը: Արժանիքները անհատական ինքնուրոյնութան մէջ պէտք է որ կայանան: Ըլլալով ուրոյն ցեղի մը խլեակը, մեզի պէտք էղածը հայ դաստիարակութիւն մըն է»⁵⁸:

Ա. Հարությունյանը գտնում էր, որ անհատները, ինչպես և ժողովուրդները, իրենց իմացական ընդունակություններից անկախ ունեն որոշակի նկարագիր ու հոգեբանություն, և նրանց վարքագիծը բնորոշվում ու պայմանավորվում է ոչ այնքան կենսափորձով, որքան անհատական խառնվածքի հակումներով: Կյանքի հարավորտիս առաջընթացը դրսևորվում է նաև քաղաքակրթության զարգացման ընդհանուր համաբնագրում: Հեղինակը չէր ընդունում այս բնագավառում թռչչաձև զարգացման հնարավորությունը, ինչպես և որևէ ազգի կամ ժողովրդի հոգեբանական մղումների հրաշագործ շրջադարձը: Նա պատրանքային, ուտոպիական որոշ երազանք էր փայխալում՝ գրելով, թե ազգերի հարաբերությունների բնույթը կարող է լինել «փոփոխական», քանի որ ազգային ճնշումն ու անիրավահավասարությունը կվերանան ժողովուրդների «հոգևոր կապի» շնորհիվ: Ասել է թե՛ հոգևոր մշակույթի վրա հիմնված բարեկամությունն ու համագործակցությունը կարող է դառնալ ազգերի մերձեցման նախահիմք: Այսպիսով՝ Ա. Հարությունյանը առաջին պլանի վրա էր դնում միայն հոգևոր արժեքների խնդիրը և ազգերի էության փոփոխությունը կապում մշակութային զարգացման ու հոգևոր առնչությունների հետ:

Եզրակացություն

Ա. Հարությունյանը 20-րդ դարասկզբի այն բացառիկ մտավորականներից էր, որի հետաքրքրությունների շրջանակները վկայում են գրողի լայն իմացականության, խորը դիտողականության մասին: Եվրոպական պատմահամեմատական խորքով նա վերակազմեց ազգային գրական դիմանկարներ, որոնք արևմտահայ գրականության մեջ հիմք դրեցին քննադատական-վերլուծական նորատիպ մեթոդին: Ա. Հարությունյանը այդպիսի գրական ճանապարհի հարթեց հենց Հ. Օշակա-

56 Նույն տեղում:

57 «Արևելեան մամուլ», 1906, N 39, էջ 272:

58 Նույն տեղում:

նի համար՝ ուղղորդելով նրա գրաշխարհը դեպի Դոստոևսկի, դեպի հոգեբանական վերլուծումների բարդ աշխարհ: Դրանց հրատապ ուսումնասիրության անհրաժեշտությունը տեսնում ենք նաև մերօրյա գիտական ոլորտում:

ՀԱՐԻԻՄՆ

Summary

ARTASHES HARUTYUNYAN'S LITERARY-HISTORICAL AND PSYCHOLOGICAL PERCEPTIONS

In Memory of the Martyred Writer and Intellectual

Anahit G. Nahapetyan

Poet, writer, literary critic Artashes Harutyunyan (1873-1915) was one of the benefactors of Western Armenian literature. He developed the literary-cultural program “Tomorrow’s Literature,” which had a contained message in the perception of national literature and corresponded to European historical-comparative and psychological perceptions.

While he was alive, the writer was able to publish three modest collections of poetry. However, while modest, almost 460 of those poems have been published in the pages of about 60 Armenian and French publications; compiling these works was undertaken by the author of this article. Artashes Harutyunyan’s views, the new percepts of his writings, old and newly discovered facts about him are disclosed in the article. His well known personality is revealed on the depths of Western Armenian literary culture from the critique of psychological literary interpretation, which is an innovative phenomenon and until today insufficiently elucidated.

Դ (Ժ) քաղի, քիլ 2 (38) սպիտակագույն, 2012

ՎԵՄ համահայկական հանդես